B.H. SHAHAZIZYAN, S.D. GHAZARYAN

DEVELOPING A NEW CONSTRUCTION OF AN ASSISTANT ROBOTIC DEVICE WITH IMPROVED TECHNICAL CHARACTERISTICS

A comparative analysis of the devices proposed by the authors, assisting the physical abilities of a person during his walking and sitting, the subsequent improvement of their characteristics is performed. A new design of the device is developed.

Keywords: assisting robotic device, exoskeleton, spring, technical characteristics.

ՀՏԴ 62-52+513.1

Ռ.Վ. ՖԱՀՐԱԴՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՎԵՍՏՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆԱԽՇԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կատարվել է հայկական զարդարվեստում կիրառվող որոշ նախշերի վերլուծություն: Ուսումնասիրվել է նախշերի նշանակությունը: Առաջարկվել են այդ նախշերի կիրառման նոր տարբերակներ:

Առանցքային բառեր. զարդարվեստ, նախշ, տարրներ:

Ներածություն: Զարդարվեստը հայ ժողովրդի ստեղծած արվեստի ամենահին, բայց ամենակենսունակ բնագավառներից մեկն է, որի մի ծայրը նախնադարյան հասարակության ընդերքում է, իսկ մյուսը, այսօր էլ ծաղկելով, ձգվում է դեպի ապագա:

Զարդարվեստը կերպարվեստի բնագավառ է, ծառայում է մարդուն շրջապատող միջավայրը զարդարելուն: Սկզբնավորվել և զարգացել է շատ հնուց: Պատկերվել են իրական և երևակայական ձևեր:Այդ իսկ պատճառով զարդարվեստը ոչ միայն արհեստի ճյուղ է, այլ նաև արվեստի:

Ծաղիկները և վարսանդա-պտղային օրգանները զարդարվեստում: [1] Զարդարվեստի բուսական մոտիվների ամենագլխավոր արտահայտությունը կենաց ծառն է: Կենաց ծառը զարդարվեստում երևան է գալիս ամենաբազմազան ձևերով, հատկանշականը, սակայն, այդ ծառերի համար խիստ ոճավորված և ընդհանրացված մոտիվներն են, ըստ որոնց՝ պատկերված են լինում բույսի ամենագլխավոր օրգանները:

Նախապես նշենք, որ զարդարվեստում «կենաց ծառ» արտահայտությունն անպայման չի նշանակում, թե գործ ունեք ծառի հետ, այլ՝ ընդհանրապես բույսի: Որպեսզի լրիվ գաղափար կազմվի կենաց ծառի մասին, անհրաժեշտ է նախ հանգամանորեն ծանոթանալ նրա օրգաններից յուրաքանչյուրին (նկ. 1):



Նկ. 1. Կենաց ծառ

Ծաղիկներից անբաժան են եղել նաև բողբոջների և վարսանդա-պտղային օրգանների գաղափարները, չնայած այդ բոլորն էլ իրենց մեջ ամփոփել են նույն պտղաբերության գաղափարը: Հայկական զարդարվեստի մեջ ծաղկային մոտիվները հանդես են գալիս բազմազան ձևերով՝ դրանք զրկելով բնական ծաղկային տեսքից, որն էլ հաճախ շփոթությունների առիթ է տալիս:

Ծաղիկները հանդես են գալիս նաև դիցաբանական զրույցներում, երևան են գալիս նաև բուժիչ հատկությունների շնորհիվ: Նախնական պարզունակ բուժումների դեպքում կիրառված ծաղիկների ունեցած դրական հետևանքը առավել ուժեղ է դրոշմվել մարդկանց մտածողության մեջ: Դրան ավելացել են նաև մի շարք դիցաբանական զրույցներ:

Չորս տարրերը և դրանց հետ կապված մոտիվները զարդարվեստում: [4], [5] Հատիկա-սերմային մոտիվների բացահայտումը զարդարվեստի մեջ օգնում է լուծելու նաև մի շարք այլ հարցեր: Դրանցից ամենակարևորը, որը սերտորեն առնչվում է զարդարվեստի մոտիվների ծագման և գաղափարական բովանդակության հարցերին, չորս տարրերի (հող, ջուր, օդ, արև) հետ կապված մոտիվների ուսումնասիրության և բացատրման խնդիրն է: Աչքի են ընկնում չորս տարրերի գաղափարական իմաստն արտահայտող բազմապիսի ու բազմաքանակ զարդաձևերի պարզ ու բարդ համադրումները (նկ. 2):



Նկ. 2. Չորս տարրերը

Զարդարվեստի հիմնական մոտիվներն ստեղծողը երկրագործ-անասնապահ ժողովուրդն է և արվեստի մեջ չէր կարող չխտացնել իր կենցաղը:

Խոսելով երկրագործության մասին՝ պիտի հաշվի առնել այն իրական պայմանները, որոնք ապահովում էին երկրագործական բնականոն կյանքը:Կարճ ասած՝ ի՞նչ էր պետք հատիկին ծլման, աճման և պտղաբերության համար: Առաջին գլխավոր պայմանը, որ մարդիկ հեշտությամբ պիտի նկատած լինեին, հողն է: Որպեսզի հատիկը կարողանա ծլել ու զարգանալ, նա պիտի գտնվի հողի մեջ: Սակայն միայն հողը չէր կարող ապահովել հատիկի աճն ու զարգացումը: Դրա համար նաև ջուր էր պետք: Նույնը կարելի է ասել արևի մասին: Հին աշխարհում բազմաթիվ լեգենդներ ու միֆեր է ստեղծել արևի, որպես կյանքի կարևորագույն գործոններից մեկի մասին:Այդպես պիտի մտածել նաև օդի մասին: Բավական է հիշել, որ բնության ամենախոշոր երևույթներից մեկը՝ մահը, բնորոշվում է նրանով, որ կենդանին դադարում է շնչել: Օդի ներկայությունը զգալ են տվել նաև քամիները:

Առաջին հայացքից թվում է, թե այստեղ գործ ունեք քրիստոնեական խաչի գաղափարը ցույց տվող զարդերի հետ: Բայց հանգամանորեն կատարվող ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ ձևերի հիմքում ընկած է ոչ թե խաչի, այլ չորս հատուկ գործոնների գաղափարը: Ավելին, հենց ինքը՝ խաչն ու խաչաձև մյուս զարդերն էլ սերված են այդ չորս ուժերի հետ կապվող պատկերացումներից:

Եզրակացություն: Հետազոտելով հայկական նախշերը [2], [3] և դրանցում առկա գաղափարական իմաստը՝ կարելի է եզրակացնել. նախշը ունի հոգևոր և փիլիսոփայական իմաստաբանական նշանակություն: Եվ այդ ամենը պահպանելու համար անհրաժեշտ է կիրառել մեր զարդանախշերի մոտիվները՝ բացահայտելով դրանց մեջ առկա ''ուղերձը'':

Մեր առաջարկում հայկական նախշը ձևափոխված է այնպես, որ համահունչ է ներկա ժամանակաշրջանին՝ չկորցնելով իր իմաստը (նկ. 3): Հայկական նախշը կարելի է կիրառել ժամանակակից աքսեսուարների դիզայնում (նկ. 4):

Նկ. 3. Նախշի օրինակներ

Նկ. 4. Նախշի օրինակներ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Մնացականյան Ա.Շ**. Հայկական զարդարվեստ.-Երևան ՀԱՍՌ: ԳԱ հրա-տարակչություն, 1955.-440 էջ:
2. **Քյուրքչյան Ա.**, **Խաչերյան Հ.Բ**. Հայկական զարդարվեստ. -Երևան: «Քրաֆթոլոջի» ՍՊԸ, 2010.- 192 էջ:
3. www.google.com,
4. www.wikipedia.com
5. https://hy.wikipedia.org/wiki/%D5%94%D5%A1%D6%80%D5%A5%D6%80

Р.В. ФАГРАДЯН

АНАЛИЗ УЗОРОВ В АРМЯНСКОМ ДЕКОРАТИВНОМ ИСКУССТВЕ

Проведен анализ узоров в армянском декоративном искусстве. Изучены значение этих узоров, их символика. Предложены новые варианты использования данных узоров.

Ключевые слова: декоративное искусство, узоры, элементы.

R.V. FAHRADYAN

ANALYSIS OF PATTERNS USED IN THE ARMENIAN DECORATIVE ART

Some patterns used in Armenian decorative art are analyzed. The significance of these patterns has been studied. New versions of these patterns are proposed.

Keywords: decorative art, pattern, elements.